բակեսցես զցանգ հայրենի եւ կամ արհամարեսցես զեղեալ կարգս եւ զկանոնս նախահարցն»։ Այս վերջին հրահանգը բնորոշում է լիովին նոր հոսանքի ոգին։ Գարեգին Սրբազանը չէ մոռացել յիշել այն խոշոր դերը, որ կատարեցին Գլաձորի մթնոլորտում սնած գիտուն վանականները առնարար ճակատ դնելով Կիլիկիայի եկեղեցականութեան թուլամորթ քաղաքականութեան հանդէպ օտար դաւանութիւնների յաւակնալից պահանջների։ Պէտք էր աւելի շեշտել, քանի որ ամբողջ հոսանքն ինքնին այլ բան չէր քան հակազդեցութիւն «արեւմտեան վարդապետների» տարտամ եւ սայթաքուն քաղաքականութեան։ Ներսէս Լամբրոնացին որ կոչուած էր նոր Շնորհալի լինելու հայոց եկեղեցու համար, դերադասեց «մետաքսազգեստ» լինել օտարի նման քան «խարազանազգեստ» իր նախնիքների հետեւութեամբ, եւ հիմը դրեց օտարամոլութեան մի ախտաւոր երեւոյթ, որ աւելի թեթեւամտութիւն էր քան ազատամտութիւն, եւ պիտի քայքայէր հայ եկեղեցու դարաւոր կանոնն չէնքը, եթէ չլինէր արեւելեան ախոյեանների ընդդիմութիւնը։ Գլաձորի դպրոցականների գիտական թէ ազգայնական ոգին մի թանկագին ժառանգութիւն է աւանդած սերունդէ սերունդ, ուսուցչից աշակերտ՝ Լամբրոնացու հակառակորդ Զորագեցիներից — Գրիգոր Տուաէորդի եւ Մխիթար Գոշ — Վանական — Վարդան Պատմիչ — Ներսէս Տարօնցի — Եսայի Նշեցի։ Գառնեցու խրատը՝ «մի՛ քակեսցես զցանդ հայրենի» ուղղուած է տկարամիտ օտարամոլների դէմ։ Պէտք է ունենալ Ստեփանոս Օրբելեանի դաղափարական քաջութիւնը յայտարարելու՝ թէ «հաւանիմք մեք ընդ հարսն ի դժոխս իջանել եւ ո՛չ ընդ հոռոմոց յերկինս ելանել»։ ասել է թէ անտեղի եւ աննպատակ համարել վիճաբանութիւնները։ Գլաձորի դպրոցի շարունակութիւնն է Տաթեւի դպրոցը, Յոհան Որոտնեցի եւ Գրիգոր Տաթեւացի մեծ հայրերով։ Առանց այս դպրոցի՝ Միաբանողների քարոզչութիւնը շատ աւելի աղետաբեր հետեւանքներ պիտի ունենար։ Պոչեանների օրով ստեղծուած հաստատութիւնները պահեցին իրենց բարոյական ազդեցութիւնը մինչեւ հայրապետական աթոռի փոխադրութիւնը Էջմիածին 1441 թուին։ Ահա՛ որպիսի նոր եւ ծաւալուն լոյս է սփռում Գարեգին Սրբազանի գործը մեր անցեալի մի խոշոր շրջանի վերայ։ Որպիսի ջանքով հաւաքել է ցրուած նիւթերը։ նոյնպիսի սիրով մշակել է եւ սպառել հիմնովին իր հաւաքածուն։ Արձանագրութիւնների ժողովածուն, կրկնում ենք, մեծ գանձ է հայ բանասիրութեան համար եւ անհրաժեշտ է որ հրատարակուի խնամքով։ թերեւս հիմ ծառայի ապագայ Corpus-ի։*

Արձանագրութիւնները եղծուում եւ կորչում են եւ պէտք է շտապել փրկել ինչ որ դեռ հնարաւոր է անել։ Հ. Գարեգինը նշանակել է ստորեւ իր կատարած սրբագրութիւնները։ ցանկալի էր կցել նաեւ քննական դիտողութիւններ կամ մեկնութիւններ, լուսաբանելու համար մութ եւ շատ անդամ անհասկանալի կէտեր։ Պէտք չէ կարծել որ ինչ որ քարի վերայ գրած է անպատճառ հարազատ է։ քարը եւս թղթի նման անճարակ է կեղծիքի դէմ։ Օրինակ Կեչառիս վանքի հիմնարկութեան վերաբերեալ արձանագրական վկայութիւնները հակասական են եւ կասկածելի։ Սիմէոն Կաթողիկոսին ծանօթ է եղել մի արձանագրութիւն ՆԹԴ=995 թուից, որի համաձայն վանքի հիմնադիրը Ապիրատ իշխանն է։ Մի այլ արձանագրութիւն ՆՁԲ=1033 թ. այդպիսին համարում է «Գրիգոր Մագիստրոս որդի Հասանայ», Գագիկ Թագաւորի եւ Սարգիս Կաթողիկոսի օրով։ Մի երրորդ արձանագրական վկայութեամբ եկեղեցին շինել է Գրիգոր Մագիստրոսը Կոստանդին Մոնոմաք Կայսրի հրամանով Շ=1051 թուին։ Վերջապէս սոյն թուից մի վերջին երկար արձանագրութիւն յայտնում է որ Գրիգոր Մագիստրոսը Կոստանդին Կայսրից ոսկի մատանի է բերել, ուրեմն մի քրիսորուլ, եւ ազատել եկեղեցին եւ խնդրել որ «ամենայն շաբաթ աւր զժամն Հասանա արացեն» եւ նորա մահից յետոյ «մագիստրոսին արացեն»։

Արդ 1033 թուին ո՛չ Գագիկ Թագաւորը եւ ո՛չ Սարգիս Կաթողիկոս կենդանի չէին, ինչպէս նկատել է արդէն Հ. Գարեգինը։ Գրիգոր Մագիստրոս որդի Հասանայ ծանօթ չէ պատմութեան։ Հասանի որդին կոչւում էր Ապիրատ։ Հ. Գարեգինը կարծում է որ Գրիգոր եւ Ապիրատ կրկնակի անուններ են միեւնոյն անձի եւ որ ՆՁԲ ուղղելու է ՆԾԲ=1003, բայց Ապիրատ մագիստրոսութեան պատիւ չունէր։ Մեր կարծիքն է որ արձանագրութիւնը հարազատ չէ։ Պատրոն բառն արդէն մատնում է որ գիրը Զաքարեան շրջանից յետոյ է։ Միւս երկու արձանագրութիւնները եւս վաւերական չեն։ Կատարեալ անհեթեթութիւն է ասել թէ եկեղեցին շինուած է կայսերական հրամանով եւ այն էլ Մոնոմաքի պէս մոլեռանդ կայսրի հրամանով։ Վերջին արձանագրութիւնը ոճի գրութեան տեսակէտից չեն կարող ոչ մի կերպ պատկանիլ Մագիստրոսին։ Միակ հարազատ գրութիւն պէտք է համարուի Սիմէոն Կաթողիկոսի յիշատակածը։ Վարդան պատմիչը հաստատում է որ եկեղեցու հիմնադիրը արդարեւ Ապիրատ իշխանն էր. իսկ Ուռհայեցուց գիտենք որ նա որդի էր Հասանայ եւ հայր Վասակի։ Անհարազատ արձանագրութեանց հեղինակները թւում է թէ ծանօթ են եղել Ապիրատի գրին, ուր ասուած է եղել թէ նա որդի է Հասանայ եւ թէ եկեղեցին շինել է Գագիկի եւ Սարգսի օրով եւ խնդրում է աղօթել իր հօր «Հասանի համար» եւ նորա մահից յետոյ Ապիրատի համար։ Գրիգոր Մագիստրոս յիշում է Մարմաշէնի վանահօր Սոսթենէսին գրած նամակում որ ի նպաստ Մարմաշէնի ոսկի մատանի է հայթայթել (Կոստանեան, էջ 103)։ Այս հասկանալի է, որովհետեւ Մարմաշէնն կառուցել էր իր հօրեղբայր Վահրամը։ Մագիստրոս անշուշտ կը յիշատակէր եթէ նոյն արտօնութիւնը վերապահուած լինէր նաեւ Կեչառիսի վանքին։ Կեղծեալ արձանագրութիւններն ուշ են քան Վարդան պատմիչը. սա եղել է Կեչառիսում եւ հարեւան վանքերում, եւ չէր ղանալ յիշել

*Ստորագծումները մերն են։

ՀԵՂԻՆԱԿ